

Գ Լ Ո Ւ Խ 12.1

Առևտրային քաղաքականություն. մաքսատուրք

Ազատ առևտուրն ընդլայնում է համաշխարհային արտադրությունը և բարեկեցությունը: Չնայած դրան՝ երկրները կիրառում են առևտրի տարաբնույթ սահմանափակումներ՝ դա պատճառաբանելով տեղական արտադրությունը խրախուսելու կեղծ մտահոգություններ: Այնինչ այդ սահմանափակումները մենաշնորհները պահպանելու նպատակ ունեն:

Առևտուրը սահմանափակելու հիմնական միջոցներն են (1) մաքսատուրքը, (2) քանակական սահմանափակումը (քվոտա), (3) լրավճարը, (4) հակազնագցումը, (5) տեխնիկական կանոնակարգերը, (6) մաքսային արժեքի որոշումը, կոռուպցիան:

Տեխնիկական կանոնակարգերը կարող են վերաբերել ապրանքի կշռին, չափին, փաթեթավորմանը, բաղադրությանը, պիտակավորմանը և այլ պարամետրերի: Օրինակ՝ Եվրոպական Միությունում վաճառվող բանանը չի կարող 14 սմ-ից պակաս երկարություն ունենալ:

Մաքսատուրքի առումով Հայաստանն աշխարհի համեմատաբար ազատական քաղաքականություն վարող երկրներից է: 2016թ-ին ներմուծման միջին կշռված մաքսադրույքը Հայաստանում 2.4% էր, Վրաստանում՝ 0.7%, Սինգապուրում՝ 0%, Ռուսաստանում՝ 4.9% (Heritage Foundation, 2017):

Եվրասիական տնտեսական միությանն անդամակցության արդյունքում միության ոչ անդամ երկրներից Հայաստան ներմուծման մաքսադրույքները զգալիորեն բարձրանալու են: Օրինակ՝ 5-ից 7 տարի շահագործման մեջ գտնվող ավտոմեքենաների ներմուծման մաքսադրույքները ներկա 10%-ից 2020թ-ից դառնալու են 25%: Շատ ավելի շեշտակի է լինելու հավամթերքի ներմուծման մաքսատուրքերի աճը, որոնց որոշ տեսակների ներմուծման մաքսատուրքերը ներկա 10%-ից բարձրանալու են ընդհուպ 80%:

Արտահանման մաքսատուրքեր, սովորաբար, կիրառում են հումք արտահանող երկրները: Օրինակ՝ Ռուսաստանը մաքսատուրք է կիրառում նավթի, մետաղների, փայտանյութի, Հնդկաստանը՝ երկաթի հանքաքարի, Չինաստանը՝ ալյումինի արտահանման նկատմամբ: Այդ մաքսատուրքերի նպատակը ոչ միայն հարկային եկամուտների ստացումն է, այլև հումքի տեղական վերամշակման խրախուսումը: Օրինակ՝ Ռուսաստանը փայտանյութի արտահանման մաքսատուրքի միջոցով ձգտում է ընդլայնել թղթի տեղական արտադրությունը:

Հայաստանում արտահանման մաքսատուրքեր չեն կիրառվում:

Համաշխարհային առևտրի սահմանափակումները ներկայում համեմատաբար ցածր են: 1947թ-ին, երբ ստորագրվեց Մաքսերի և առևտրի գլխավոր համաձայնագիրը, զարգացած երկրներում ներմուծման միջին մաքսադրույքը 22% էր (Bown & Irwin, 2015): Ներկայում այն նվազ քան 2% է: Այնուհանդերձ՝ զարգացած երկրներում շարունակում են համեմատաբար բարձր մնալ զարգացող երկրների համար առաջնային հետաքրքրություն ներկայացնող ապրանքների, հատկապես՝ գյուղմթերքների ներմուծման սահմանափակումները:

Մաքսատուրք

Մաքսատուրքն առևտրի (սովորաբար ներմուծման) հարկ է: Այն ըստ հաշվարկման մեթոդի լինում է.

(1) արժեքային (ad valorem¹), որը հաշվարկվում է տոկոսով՝ ապրանքի մաքսային արժեքի նկատմամբ (օրինակ՝ ներմուծված հագուստի արժեքի 10%),

(2) յուրահատուկ (specific), որը հաշվարկվում է հաստատուն սակագնով՝ ապրանքի միավորի համար՝ անկախ ապրանքի գնից (օրինակ՝ ներմուծված գարեջրի մեկ լիտրի համար 0.04 եվրո, ներմուծված կոնյակի 1 լիտրի համար 1.5 եվրո (100% սպիրտի հաշվարկով)):

Նշանակենք՝ ապրանքի գինը նախքան մաքսատուրքը P , իսկ մաքսատուրքից հետո՝ P_t : Յուրահատուկի դեպքում $P_t = P + t_S$, իսկ արժեքայինի դեպքում $P_t = P(1 + t_{AV})$, որտեղ t_S և t_{AV} համապատասխանաբար յուրահատուկ և արժեքային մաքսադրույքներն են:

Երբ ներմուծման գինը բարձրանում է, արժեքայինի դեպքում մաքսատուրքն ավելանում է, իսկ յուրահատուկի դեպքում չի փոխվում: Յուրահատուկ մաքսադրույքը, սովորաբար, կիրառվում է տեղական էժանագին արտադրությունը պաշտպանելու նպատակով: Օրինակ՝ գարեջրի ներմուծման յուրահատուկ մաքսադրույքը խոչընդոտում է էժանագին գարեջրի ներմուծումը և այդ կերպ օժանդակում է դրա տեղական արտադրությանը:

Զարգացող երկրներում մաքսատուրքերը կիրառվում են ոչ այնքան առևտրի կարգավորման, որքան կառավարության եկամուտների համալրման նպատակով: Այդ երկրներում հարկային եկամուտների մեջ անուղղակի հարկերի (ԱԱՀ, մաքսատուրք) կշիռը մեծ է, քանի որ տնտեսական գործունեության զգալի մասը ստվերային է, և եկամուտների մեծ մասը չի հարկվում:

Աղյուսակ 12-1: Հայաստանի կառավարության հարկային եկամուտները 2016թ-ին

	մլրդ դր.	%
Ընդամենը հարկային եկամուտները	1079.7	100
այդ թվում		
ԱԱՀ	392.1	36
շահութահարկ	127.2	12
եկամտային հարկ	332.7	31
մաքսատուրք	55.4	5
ակցիզային հարկ	59.7	6
բնօգտագործման վճար	27.4	3

Աղբյուրը՝ ԱՎԾ, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2016թ-ի հունվար-դեկտեմբերին, 2017թ:

Իսկ զարգացած երկրներում մաքսատուրքերը հիմնականում կիրառվում են գյուղմթերքների ու աշխատատար արդյունաբերական ապրանքների տեղական (ոչ մրցունակ) արտադրությունները պաշտպանելու նպատակով:

¹ Լատիներեն, «արժեքին համապատասխան»:

Մաքսատուրք, մասնակի հավասարակշռություն

■ Փոքր երկիր, ներմուծման մաքսատուրք

Մաքսատուրքի ազդեցությունը փոքր և մեծ երկրներում տարբեր է: Հիշենք՝ փոքր է այն երկիրը, որի առևտրի կշիռը համաշխարհային առևտրում այնքան փոքր է, որ այդ երկրի առևտուրը միջազգային գների վրա չի ազդում:

Համարում ենք, որ ապրանքների շուկաները կատարյալ մրցակցային են:


Գծ. 12-1-ում D^d և S^d X ապրանքի տեղական պահանջարկն ու առաջարկն են: Ավտարկիայի դեպքում շուկան հավասարակշռվում է e կետում: Ազատ առևտրի դեպքում, եթե երկիրը X ապրանքում համեմատական առավելություն չունի, ապա միջազգային գինը՝ P_X^0 , ավտարկիայի գնից ցածր է, և երկիրն այդ ապրանքը ներմուծում է: Քանի որ երկիրը փոքր է, ապա ներմուծումը միջազգային գնի վրա չի ազդում, և X ապրանքի միջազգային առաջարկի ուղիղը՝ S^w , երկրի համար բացարձակ առաձգական է:

P_X^0 միջազգային գնի դեպքում երկրի արտադրությունը X^1 է, սպառումը՝ X^2 , ներմուծումը՝ $X^2 - X^1$:

Եթե X ապրանքի ներմուծման սահմանափակմամբ շահագրգռված անձիք քաղաքականապես ազդեցիկ են, ապա երկիրը կսահմանի մաքսատուրք: Դիցուք մաքսատուրքը յուրահատուկ է և հավասար է t -ի: Ապրանքի գինը ներքին շուկայում կբարձրանա $P_X^0 + t$: Համապատասխանորեն՝ միջազգային առաջարկի նոր ուղիղը կլինի $S^w + t$: Նոր հավասարակշռությունում արտադրությունն ընդլայնվում է X^1 -ից X^3 , սպառումը նվազում է X^2 -ից X^4 , ներմուծումը կրճատվում է $X^2 - X^1$ -ից $X^4 - X^3$:

Գծանկար 12-1:

Ներմուծման մաքսատուրք,
փոքր երկիր, մասնակի հավասարակշռություն



Բարեկեցության վրա մաքսատուրքի ազդեցությունը մեկնաբանենք սպառողի և արտադրողի ավելցուկների միջոցով:

Սպառողի ավելցուկը սպառողի փաստացի վճարած գնի և այն առավելագույն գնի տարբերությունն է, որը սպառողը պատրաստ է վճարել: Գծ. 12-1-ում ինչպես վկայում է պահանջարկի ուղիղը՝ ապրանքի X^1 -րդ միավորի համար ոմն մեկը պատրաստ է առավելագույնը վճարել P_X^* , սակայն փաստացի (նախքան մաքսատուրքի սահմանումը) վճարում է P_X^0 : Տարբերությունն այդ սպառողի ավելցուկն է: Հետևաբար՝ երբ գինը P_X^0 է, բոլոր սպառողների ընդհանուր ավելցուկը հավասար է $P_X^0 \omega \delta$ եռանկյանը:

Արտադրողի ավելցուկը ապրանքի վաճառքի փաստացի գնի և այն նվազագույն գնի տարբերությունն է, որով արտադրողը պատրաստ է ապրանքն առաջարկել շուկայում: Գծ. 12-1-ում ինչպես վկայում է առաջարկի ուղիղը՝ ապրանքի X^1 -րդ միավորը ոմն արտադրող պատրաստ է վաճառել P_X^0 գնով և փաստացի վաճառում է այդ գնով (նախքան մաքսատուրքի սահմանումը): Ուստի, երբ գինը P_X^0 է, այդ արտադրողի ավելցուկը X^1 -րդ միավորի համար զրո է: Բայց բոլոր արտադրողների ընդհանուր ավելցուկը $\Phi P_X^0 \varepsilon$ է:

Մաքսատուրքի հետևանքով գինը P_X^0 -ից բարձրանում է $P_X^0 + t$, և սպառողի ավելցուկը կրճատվում է $a + b + c + d$ տիրույթի չափով: Միևնույն ժամանակ, արտադրողի ավելցուկն ընդլայնվում է a տիրույթի չափով:

a -ն հասարակության համար կորուստ չէ, քանի որ այն սպառողներից փոխանցվում է արտադրողներին (եթե իհարկե սպառողների միավոր կորուստը և արտադրողների նույնքան օգուտը հասարակության համար նույն կշիռն ունի):

Մաքսատուրքի հետևանքով կառավարության հարկային եկամուտներն ավելանում են c տիրույթի չափով, որը հավասար է ներմուծման քանակի և մաքսատուրքի արտադրյալին: Տեսականում կառավարությունը հարկային եկամուտներն օգտագործում է ի շահ հասարակության: Եթե մենք հավատում ենք այդ անհեթեթ վարկածին, ապա c տիրույթը հասարակության համար կորուստ չէ:

Եթե a ու c տիրույթները կարող են կորուստ չլինել (դրանք սպառողներից անցնում են արտադրողներին ու կառավարությանը), ապա b և d տիրույթներն անխուսափելի և անվերականգնելի կորուստներ են (դրանք սպառողները կորցնում են, բայց ոչ մեկին չեն անցնում):

b -ն կորուստ է, քանի որ X_1 -ից X_3 արտադրության ընդլայնումն անարդյունավետ է: Այսպես՝ X_1 -ից X_3 քանակի տեղական արտադրության ծախսը (որն արտահայտվում է S^d առաջարկի կորով) մեծ է այն արտերկրից ձեռք բերելու ծախսից (որն արտահայտվում է S^w առաջարկի կորով): Ռեսուրսներն ուղղվում են X -ի արտադրություն միայն ու միայն մաքսատուրքի պատճառով: Ուստի՝ տնտեսությունը կշահեր, եթե X_1 -ից X_3 թողարկման վրա ծախսվող ռեսուրսներն օգտագործվեին այլ ոլորտներում, որոնցում երկիրը մրցունակ է:

Իսկ d -ն կորուստ է, քանի որ սպառման X_2 -ից X_4 կրճատումն անարդյունավետ է: $X_2 - X_4$ քանակը սպառողներն ավելի բարձր են գնահատում (որն արտահայտվում է D^d պահանջարկի կորով), քան ներմուծման գինն է ազատ առևտրի դեպքում (որն արտահայտվում է S^w առաջարկի կորով):

Այսպիսով՝ մաքսատուրքի հետևանքով երկրի բարեկեցությունը կրճատվում է $b + d$ տիրույթի չափով:

Աղյուսակ 12-2: Մաքսատուրքի ազդեցությունը փոքր երկրի բարեկեցության վրա		
	Ներմուծման մաքսատուրք գծ. 12-1	Արտահանման մաքսատուրք գծ. 12-2
Սպառողի ավելցուկ	$-(a + b + c + d)$	$+ a$
Արտադրողի ավելցուկ	$+ a$	$-(a + b + c + d)$
Կառավարության բյուջե	$+ c$	$+ c$
Երկրի բարեկեցություն	$-(b + d)$	$-(b + d)$

Միևնույն ժամանակ, մաքսատուրքն ազդում է եկամուտների բաշխման վրա: Այսպես՝ ներմուծման մաքսատուրքի դեպքում ներմուծվող ապրանքի գինը բարձրանում է, իսկ ըստ Հեքեր-Օհլինի թեորեմի՝ ներմուծվող ապրանքում ավելի ինտենսիվ կիրառվում է երկրի հազվագյուտ ռեսուրսը: Հետևաբար՝ ըստ Սթոլիեր-Սամյուելսոնի թեորեմի՝ առատ ռեսուրսի իրական վճարը նվազում է, իսկ հազվագյուտ ռեսուրսի իրական վճարն աճում է:

Իսկ կարճատև ժամանակաշրջանում՝ ըստ Յուրահատուկ ռեսուրսի մոդելի (երբ կապիտալը յուրահատուկ է, աշխատանքը՝ ոչ), աշխատանք ռեսուրսի իրական եկամուտը նվազում է (եթե սպառման կառուցվածքում գերակշռում է ներմուծվող ապրանքը), ներմուծմանը փոխարինող ճյուղին յուրահատուկ կապիտալի իրական վճարն աճում է, իսկ արտահանող ճյուղին յուրահատուկ կապիտալի իրական վճարը նվազում է:

■ Փոքր երկիր. արտահանման մաքսատուրք

Արտահանման մաքսատուրքը հիմնականում կիրառում են հումք արտահանող երկրները: Երբեմն երկրներն արտահանման մաքսատուրքի փոխարեն կիրառում են արտահանման քողարկված հարկ: Այսպես՝ Ուզբեկստանում և Թուրքմենստանում բամբակ, իսկ Գանայում և Փղոսկրի Ափում կակաո արտադրողները պարտավոր են այն վաճառել պետական կազմակերպությանը, որը գնում է միջազգայինից ցածր գնով:


Երբեմն երկրներն արտահանումը (սովորաբար սննդամթերքի դեպքում) ժամանակավորապես սահմանափակում են՝ ներքին շուկայում գների աճը զսպելու համար: Այսպես՝ 2007-8թթ-ին, երբ սննդամթերքի միջազգային գներն աճում էին, հացահատիկ արտադրող մի շարք երկրներ (Ռուսաստան, Ղազախստան, Ուկրաինա, Արգենտինա) սահմանափակեցին դրա արտահանումը՝ ներքին շուկայում գների աճը զսպելու համար: 2010-11թթ-ին Ռուսաստանը հացահատիկի արտահանումն ընդհանրապես արգելեց՝ այս անգամ երաշտի պատճառով գների աճը զսպելու համար: Իսկ 2015թ-ին դարձյալ Ռուսաստանը սահմանեց հացահատիկի արտահանման ժամանակավոր մաքսատուրք, քանի որ ռուբլու արժեզրկման պատճառով արտահանման ծավալը շեշտակի աճել էր, ինչը հղի էր հացահատիկի ներքին պակասորդ ստեղծելու վտանգով:

Ճորտությունը Ուզբեկստանում

Ամեն աշուն Ուզբեկստանում ուսանողները, աշակերտները, ուսուցիչները, բժիշկները, բանտերից ժամանակավորապես ազատված կալանավորները և այլոք պարտադրված մասնակցում են բամբակի բերքահավաքին: Բերքի հավաքման նորման չկատարելու դեպքում աշխատողները կարող են հեռացվել աշխատանքից, իսկ կալանավորների ազատազրկման ժամկետը կարող է երկարացվել: Բերքահավաքի սկզբում քաղաքներից մարդկանց ավտոբուսներով և բեռնատարներով տեղափոխում են բամբակի դաշտերը, ուր նրանք մնում են մի քանի շաբաթ՝ երբեմն մինչև բերքահավաքի վերջը: Ուզբեկստանի կառավարությունն այս կերպ բերքահավաքն իրականացնում է նվազագույն ծախսերով: Իսկ այն, որ օրինակ՝ ուսումն ընդհատվում է, կառավարությունը չի հուզում. կրթված անձիք ինքնուրույն են մտածում, իսկ ինքնուրույն մտածողները բոլոր իշխանությունների մեծագույն պրոբլեմն են:

Գծանկար 12-2:

Արտահանման մաքսատուրք.
 փոքր երկիր, մասնակի հավասարակշռություն



Արտահանման մաքսատուրքը կարող է նաև ներքին արտադրությունը զարգացնելու նպատակ հետապնդել: Այսպես՝ Ֆինլանդիայում թղթի արտադրությունը զգալիորեն կախված է ռուսական փայտանյութի ներմուծումից: Ռուսաստանը, որպեսզի ֆիննական ընկերություններին ստիպի թղթի արտադրությունը տեղափոխել Ռուսաստան, 2008թ-ին փայտանյութի արտահանման համար սահմանեց 25% մաքսատուրք: Սակայն ֆիններին միապետական Ռուսաստանի գործարար միջավայրը վստահություն չի ներշնչում, և նրանք չեն շտապում Ռուսաստանում ներդրումներ կատարել: 2012թ-ի օգոստոսին Ռուսաստանն անդամակցելով ԱՀԿ-ին մաքսատուրքն իջեցրեց 15%, բայց սահմանեց արտահանման քվոտաներ: Ներկայում փայտանյութի արտահանման համար կիրառվում են և՛ յուրահատուկ (մինչև 100 եվրո մ³-ի համար), և՛ արժեքային (մինչև 80%) մաքսատուրքեր:

Գծ. 12-2-ում վերլուծվում է փոքր երկրում արտահանման յուրահատուկ մաքսատուրքի ազդեցությունը: D^w -ն փոքր երկրի արտահանման նկատմամբ համաշխարհային պահանջարկն է, որը բացարձակ առաձգական է: Ազատ առևտրի դեպքում ապրանքի գինը P_X^0 է, իսկ արտահանումը $X^2 - X^1$ է:

Երկիրը փոքր է, և արտահանման մաքսատուրքը միջազգային գնի վրա չի ազդում: Այսինքն՝ մաքսատուրքի հետևանքով, երբ արտահանման քանակը կրճատվում է, արտաքին շուկայում գները չեն բարձրանում:

Արդյունքում՝ մաքսատուրքի սահմանումից հետո արտահանողներն ապրանքն արտաքին շուկայում նախկինի պես իրացնում են P_X^0 գնով, բայց մաքսատուրքը վճարելուց հետո իրենց մնում է $P_X^0 - t$, որտեղ t -ն մաքսատուրքն է: Միևնույն ժամանակ, ներքին շուկայում մրցակցության շնորհիվ գինը P_X^0 -ից կրճատվում է $P_X^0 - t$:

Քանի որ գինը նվազում է, ապա առաջարկը կրճատվում է X^2 -ից X^4 , իսկ սպառումն աճում է X^1 -ից X^3 : Համապատասխանորեն՝ արտահանումը $X^2 - X^1$ -ից նվազում է $X^4 - X^3$:

Արտահանման մաքսատուրքի արդյունքում արտադրողի ավելցուկը կրճատվում է $a + b + c + d$ տիրույթի չափով: Որից a -ն փոխանցվում է սպառողին, իսկ c -ն՝ կառավարությանը: a -ն սպառողի ավելցուկի աճն է, իսկ c -ն՝ կառավարության մաքսային եկամուտների աճը: b -ն ներքին սպառման անարդյունավետ աճն է, քանի որ $X^3 - X^1$ քանակն արտերկրի սպառողները գնահատում են ավելի, քան ներքին սպառողները: Իսկ d -ն արտադրության անարդյունավետ կրճատումն է, քանի որ $X^2 - X^4$ քանակի տեղական արտադրության ծախսը փոքր է արտերկրում իրացման գնից:

Դարձյալ, ինչպես ներմուծման մաքսատուրքի դեպքում, հասարակության բարեկեցությունը նվազում է $b + d$ տիրույթի չափով (աղ. 12-2):

■ Մեծ երկիր, ներմուծման մաքսատուրք

Ներմուծման մաքսատուրքի պատճառով փոքր երկրի բարեկեցությունն անհրաժեշտաբար կրճատվում է: Մեծ երկրի բարեկեցությունը, սակայն, կառող է բարելավվել:

Մեծ երկրի ներմուծումը համաշխարհային պահանջարկի նշանակալի մասն է, և երբ մեծ երկիրն ընդլայնում է ներմուծումը, համաշխարհային շուկայում գինը բարձրանում է: Դա նշանակում է, որ մեծ երկրի համար միջազգային առաջարկի (այսինքն՝ մնացյալ աշխարհի արտահանման) ուղիղը վերընթաց է: Գծ. 12-3-ում մնացյալ աշխարհի արտադրողները ք գնով պատրաստ են մեծ երկիր արտահանել ապրանքի b քանակ:


Գծ. 12-4-ում X ապրանքի տեղական առաջարկը S^d է, իսկ ընդհանուր առաջարկը՝ S^{d+w} : Ընդհանուր առաջարկը երկրի տեղական առաջարկի և այդ երկրում մնացյալ աշխարհի առաջարկի գումարն է: Ազատ առևտրի հավասարակշռությունը F կետում է, որում ներքին պահանջարկը (D^d) հավասարվում է ընդհանուր առաջարկին: Ազատ առևտրի հավասարակշռո գինը P_X^0 է, իսկ ներմուծումը $X^2 - X^1$ է:

Երբ երկիրը սահմանում է ներմուծման մաքսատուրք, ընդհանուր առաջարկի ուղիղը մաքսի շահով տեղաշարժվում է վեր: Նոր ընդհանուր առաջարկը $S^{d+w} + t$ է: Նոր հավասարակշռությունը H կետում է, որում գինը բարձրացել է, իսկ ներմուծումը կրճատվել և կազմում է $X^4 - X^3$:

Արձանագրենք փոքր երկրի համեմատ հետևյալ էական տարբերությունը: Երբ մեծ երկրի ներմուծման մաքսատուրքի հետևանքով մեծ երկրի պահանջարկը կրճատվում է X^2 -ից X^4 , ապա միջազգային շուկայում գինը նվազում է P_X^0 -ից P_X^1 : Արդյունքում՝ մեծ երկրի առևտրի պայմանները բարելավվում են:


Գծանկար 12-3:

Մեծ երկրում ապրանքի տեղական, արտերկրի և ընդհանուր առաջարկը



Գծանկար 12-4:

Ներմուծման մաքսատուրք, մեծ երկիր, մասնակի հավասարակշռություն



Իսկ ներքին գինը հավասար է միջազգային գնի ու մաքսի գումարին՝ $P_X^1 + t$:

Այժմ պարզենք, թե ինչպես է փոխվում երկրի բարեկեցությունը: Սպառողի ավելցուկը կրճատվում է $a + b + c + d$ չափով, որից a փոխանցվում է արտադրողին, c փոխանցվում է կառավարությանը, իսկ $b + d$ անարդյունավետության կորուստներն են:

Մաքսատուրքից կառավարության եկամուտը $c + e$ է (ներմուծման քանակի և մաքսատուրքի արտադրյալը), որից c մասը վճարում են ներքին սպառողները, իսկ e մասը՝ արտերկրի արտադրողները:

Այսպես՝ նախքան մաքսը սպառողները վճարում էին P_X^0 , ուստի՝ նրանց համար ապրանքը թանկացել է $[P_X^1 + t] - P_X^0$ չափով: Այսինքն՝ սպառողներին բաժին է ընկնում մաքսատուրքի միայն c մասը:

Իսկ արտերկրի արտադրողների համար արտահանման գինը կրճատվել է $P_X^0 - P_X^1$ չափով: Ինչը նշանակում է նրանք փաստացի վճարում են մաքսատուրքի e մասը:

Քանի որ e -ն վճարում են արտերկրի արտադրողները, ապա, երբ $e > b + d$, ստատիկ վերլուծությունում կարող ենք արձանագրել, որ մեծ երկիրը մաքսատուրքից շահել է:

Սակայն, այն որ ներմուծման մաքսատուրքից մեծ երկրի առևտրի պայմանները բարելավվում են, նույնն է՝ մնացյալ աշխարհի առևտրի պայմանները վատանում են: Հետևաբար՝ այլ երկրները պատասխան մաքսատուրքեր կսահմանեն: Արդյունքում՝ բոլորի բարեկեցությունը կնվազի:

■ Մեծ երկիր. արտահանման մաքսատուրք

Մեծ երկիրը կարող է շահել ոչ միայն ներմուծման, այլև արտահանման մաքսատուրքից:

Մեծ երկրի արտահանումը համաշխարհային սպառման (պահանջարկի) նշանակալի մասն է կազմում: Այդ պատճառով, երբ մեծ երկիրն ընդլայնում է արտահանումը, միջազգային շուկայում գինը նվազում է: Արդյունքում՝ մեծ երկրի համար միջազգային պահանջարկը (արտերկրի պահանջարկը մեծ երկրի արտահանման նկատմամբ) վարընթաց է: Գծ. 12-5-ում արտերկրի սպառողները պատրաստ են p գնով ձեռք բերել ապրանքի b քանակ:

Գծ. 12-6-ում տեղական պահանջարկը D^d է, ընդհանուր պահանջարկը՝ D^{d+w} : Ազատ առևտրի հավասարակշռությունը F կետում է, որում ներքին առաջարկը՝ S^d , հավասարվում է ընդհանուր պահանջարկին: Ազատ առևտրի հավասարակշիռ գինը P_X^0 է, իսկ արտահանումը $X^2 - X^1$ է:

Երբ երկիրը սահմանում է արտահանման մաքսատուրք, ապա միջազգային պահանջարկի ուղիղ մաքսի չափով տեղաշարժվում է ներքև՝ $D^{d+w} - t$: Նոր հավասարակշռությունը H կետում է: Արտահանումը կրճատվել է և կազմում է $X^4 - X^3$: Նկատենք, որ միջազգային շուկայում գինը բարձրացել է P_X^1 :

Այսպիսով, երբ մեծ երկիրը սահմանում է արտահանման մաքսատուրք, միջազգային շուկայում գինը P_X^0 -ից բարձրանում է P_X^1 , և մեծ երկրի առևտրի պայմանները բարելավվում են: Իսկ ներքին շուկայում գինը հավասար է միջազգային գնի ու մաքսատուրքի տարբերությանը՝ $P_X^1 - t$:


Արտահանման մաքսատուրքի հետևանքով արտադրողի ավելցուկը կրճատվում է $a + b + c + d$ տիրույթի չափով, որից a փոխանցվում է սպառողին, c փոխանցվում է կառավարությանը, իսկ $b + d$ անարդյունավետության կորուստներն են:

Մաքսատուրքից կառավարության եկամուտը $c + e$ է (արտահանման քանակի և մաքսատուրքի արտադրյալը), որից c մասը վճարում են արտահանողները (տեղական արտադրողները), իսկ e մասը՝ արտերկրի սպառողները:

Դարձյալ, երբ $e > b + d$, ստատիկ վերլուծությունում կարող ենք համարել, որ մեծ երկիրը արտահանման մաքսատուրքից շահում է:


Գծանկար 12-5:

Մեծ երկրում տեղական, միջազգային և ընդհանուր պահանջարկը



Գծանկար 12-6:

Արտահանման մաքսատուրք, մեծ երկիր, մասնակի հավասարակշռություն



Այսպիսով՝ այլ հավասար պայմաններում մեծ երկիրը կարող է ներմուծման մաքսատուրքի միջոցով փաստացի հարկ սահմանել օտարերկրյա արտադրողների վրա: Նմանապես՝ մեծ երկիրը կարող է արտահանման մաքսատուրքի միջոցով փաստացի հարկ սահմանել օտարերկրյա սպառողների վրա: Սակայն այլ պայմանները հազվադեպ են անփոփոխ մնում:

2002թ-ի մարտին ԱՄՆ-ի նախագահ Բուշը ԱՄՆ պողպատի ներմուծման մաքսատուրքերը դարձրեց 8-ից 30% (մինչ այդ դրանք 0-ից 1% էին): Ինչո՞ւ էր Բուշին հանկարծ հուզել պողպատագործների ճակատագիրը: Հայտնի փաստ է, որ քաղաքական գործիչներին հուզում է միայն իրենց ճակատագիրը և (վեր)ընտրվելը (վերարտադրվելը):

Տվյալ դեպքում Բուշին անհրաժեշտ էր, որ Փենսիլվանիան և Արևմտյան Վիրջինիան, որոնց պողպատագործական արտադրությունները շահելու էին այդ մաքսատուրքից, հաջորդ նախագահական ընտրություններում քվեարկեին իր օգտին: Եվրոպական Միությունը, որի պողպատ արտահանողները վնասվելու էին, սպառնաց սահմանել պատասխան մաքսատուրքեր մի քանի հարյուր ամերիկյան ապրանքների համար, ընդ որում այդ ապրանքներն ընտրվել էին այնպես, որ հատկապես վնասեին Փենսիլվանիա և Արևմտյան Վիրջինիա նահանգներին ու դրանով՝ հարվածեին Բուշին հաջորդ ընտրություններում:

2003թ-ի դեկտեմբերին Առևտրի համաշխարհային կազմակերպության ճնշման ներքո Բուշը վերացրեց պողպատի հավելյալ մաքսատուրքերը: Իսկ 2004թ-ի ընտրություններում Փենսիլվանիան քվեարկեց Բուշին դեմ, Արևմտյան Վիրջինիան՝ կողմ:

Մաքսատուրք, ընդհանուր հավասարակշռություն

■ Փոքր երկիր, ներմուծման մաքսատուրք


Մասնակի հավասարակշռության վերլուծությունը սահմանափակվում է սոսկ մեկ ապրանքի շուկայում հավասարակշռության դիտարկումով: Շուկաները, սակայն, փոխկապակցված են, և մի շուկայում փոփոխությունն ազդում է մնացյալ շուկաների վրա: Այդ փոխառնչությունը դիտարկելու համար ստորև կվերլուծենք մաքսատուրքի ազդեցությունն ընդհանուր հավասարակշռության դեպքում:

Գծ. 12-7-ում նախքան մաքսի սահմանումը ապրանքի ներքին հարաբերական գինը՝ $p = P_X/P_Y$, հավասար է միջազգայինին: Երկիրն արտադրում է Q կետում, ուր հարաբերական գնի ուղիղը շոշափում է արտադրական հնարավորությունների սահմանին, և սպառում է C կետում, ուր հարաբերական գնի ուղիղը շոշափում է հասարակության անտարբերության կորին: Երկիրը Y ապրանքն արտահանում է, X ապրանքը՝ ներմուծում:

Այնուհետև երկիրը սահմանում է ներմուծման մաքսատուրք՝ t դրույքով: Ներքին հարաբերական գինը բարձրանում է $p^t = P_X(1+t)/P_Y$, և արտադրությունը Q -ից տեղաշարժվում է N : Համապատասխանորեն՝ արտահանվող ապրանքի արտադրությունը կրճատվում է, ներմուծմանը փոխարինող ապրանքի արտադրությունը՝ ընդլայնվում:

Գծանկար 12-7:

Փոքր երկրում ներմուծման մաքսատուրքի ազդեցությունը (ընդհանուր հավասարակշռություն)



Բայց երկիրը փոքր է, և մաքսատուրքը միջազգային գնի վրա չի կարող ազդել: Այդ պատճառով երկիրը, արտադրելով N կետում, նախկինի պես առևտուր է անում p միջազգային գնով: Ուստի՝ մաքսատուրքից հետո երկրի սպառումը կգտնվի N կետով տարված p միջազգային գնի ուղղի վրա:

Միևնույն ժամանակ, սպառման որոշումներն ընդունվում են ներքին գների հիման վրա (օպտիմալ սպառման կետում հարաբերական գինը հավասար է փոխարինման սահմանային դրույքին): Ուստի սպառման կետում հասարակության անտարբերության կորը պետք է շոշափի p^t ներքին հարաբերական գնին:

Արդյունքում՝ մաքսատուրքից հետո երկիրը սպառում է E կետում: Այդ կետը գտնվում է N կետով տարված p միջազգային գնի ուղղի վրա, և այդ կետում հասարակության անտարբերության U_2 կորը շոշափում է ներքին հարաբերական գնի p^t ուղղին:

Մաքսատուրքից հետո երկիրն արտահանում է NF միավոր Y , ներմուծում է FE միավոր X : Արձանագրենք՝ ազատ առևտրի համեմատ և՛ արտահանումը, և՛ ներմուծումը կրճատվել են:

Ներմուծման LE մասը, սակայն, կառավարությունը գանձում է իբրև մաքսատուրք (խոստանալով այդ գումարով Հյուսիս-հարավ ավտոմայրուղու շինարարությունն ավարտել մինչև 2099թ-ը, և, միևնույն ժամանակ, Արագածի գագաթին նավահանգիստ կառուցել):

Կատարենք անհավանական ենթադրություն՝ կառավարությունը մաքսատուրքի գումարը ծախսում է հասարակության բարեկեցության համար: Այդ դեպքում հասարակության սպառումը կլինի E կետում:

Սակայն E -ում հասարակության բարեկեցությունը ցածր է, քան C -ում էր ($U^2 \approx U^1$): Նշեցինք նաև՝ արտահանումն ու ներմուծումը նվազել են:

Այսպիսով՝ ներմուծման մաքսատուրքի հետևանքով կրճատվում է այն ապրանքի արտադրությունը, որում երկիրն ունի համեմատական առավելություն: Ու փոքր երկրի բարեկեցությունն առևտրի սահմանափակումից նվազում է: Այսպիսով՝ երկրի զարգացման համար ազատ առևտուրը անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է:

■ Մեծ երկիր. ներմուծման մաքսատուրք

Ներմուծման մաքսատուրքի ընդհանուր հավասարակշռության վերլուծությունը կարող ենք իրականացնել փոխառաջարկի կորերի միջոցով:


Փոխառաջարկի կորերը ցույց են տալիս հարաբերական գների տարբեր արժեքների դեպքում արտահանման և ներմուծման քանակները (գծ. 12-8): Գծանկարում հարաբերական գներն արտահայտված են սկզբնակետից տարված ճառագայթների թեքությամբ:

Այսպես՝ A երկրի փոխառաջարկի կորը ցույց է տալիս, որ p^0 միջազգային հարաբերական գնի դեպքում A երկիրը պատրաստ է արտահանել X -ի X_A^0 միավոր և ներմուծել Y -ի Y_A^0 միավոր: Փոխառաջարկի կորն ուռուցիկ է, քանի որ X -ի հարաբերական գնի աճի դեպքում ($p^2 > p^1 > p^0$) երկիրը պատրաստ է ընդլայնել X -ի արտահանումը՝ Y -ի ավելի ու ավելի շատ ներմուծման դիմաց: Համապատասխանորեն՝ B երկրի փոխառաջարկի կորը գոգավոր է, քանի որ Y -ի հարաբերական գնի աճի դեպքում ($1/p^0 > 1/p^1 > 1/p^2$) այն պատրաստ է ավելի շատ Y արտահանել՝ X -ի ավելի ու ավելի շատ ներմուծման դիմաց:


Հավասարակշիռ միջազգային հարաբերական գինը որոշվում է երկու երկրների փոխառաջարկի կորերի հատման կետով անցնող ճառագայթով: Գծ. 12-9-ում հավասարակշիռ գինը p^1 է: Միայն այդ գնի դեպքում է, որ մի երկրի արտահանումը հավասար մյուս երկրի ներմուծմանը: Այսպես, երբ X -ի հարաբերական գինը p^0 է, X ապրանքից A երկիրը պատրաստ է արտահանել ավելի քիչ, քան B երկիրը ցանկանում է ներմուծել ($X_A^0 < X_B^0$), իսկ Y ապրանքից B -ն պատրաստ է արտահանել ավելի շատ, քան A -ն ցանկանում է ներմուծել ($Y_B^0 > Y_A^0$): Այնինչ p^1 գնի դեպքում երկու ապրանքների շուկաներն էլ հավասարակշռված են:

Այժմ դիտարկենք մաքսատուրքի ազդեցությունը: Գծ. 12-10-ում A երկրի փոխառաջարկի կորն ազատ առևտրի դեպքում A^1 է, իսկ միջազգային հարաբերական գինը p^1 է: Համապատասխանորեն՝ երկիրն արտահանում է X_A^1 , ներմուծում է Y_A^1 :

Գծանկար 12-8:
Փոխառաջարկի կորերը



Գծանկար 12-9:
Հավասարակշիռ միջազգային հարաբերական գինը



Փոքր երկրի վերլուծությունից գիտենք, երբ միջազգային հարաբերական գինը չի փոխվում, ապա մաքսատուրքի հետևանքով արտահանման և ներմուծման ծավալները կրճատվում են: Գծ. 12-10-ում դա նշանակում է, որ երբ երկիրը սահմանում է ներմուծման մաքսատուրք, ապա փոխառաջարկի կորը տեղաշարժվում է ձախ՝ A^1 -ից A^2 , և տրված p^1 հարաբերական գնի դեպքում առևտրի ծավալը կրճատվում է մինչև π կետ: Հավասարակշռության նոր π կետում երկիրը նախընտրում է արտահանել X_A^2 և ներմուծել Y_A^2 :

Սակայն մեծ երկրի առանձնահատկությունն այն է, որ երբ այն սահմանում է ներմուծման մաքսատուրք, ապա միջազգային հարաբերական գինը փոխվում է: Այսպես՝ գծ. 12-11-ում, երբ A մեծ երկիրը սահմանում է մաքսատուրք (որից նրա փոխառաջարկի կորը տեղաշարժվում է A^1 -ից A^2), ապա հավասարակշռությունը e^1 -ից տեղաշարժվում է e^2 : Համապատասխանորեն՝ արտահանվող ապրանքի հավասարակշիռ հարաբերական գինը p^1 -ից բարձրանում է p^2 : Շեշտենք՝ թեպետ A երկրի արտահանումն ու ներմուծումը նվազում են, բայց առևտրի պայմանները բարելավվում են ($p^2 > p^1$):


Մաքսատուրքը բարելավում է մեծ երկրի բարեկեցությունը, եթե առևտրի պայմանների բարելավման դրական էֆեկտը գերակշռում է առևտրի ծավալի կրճատման բացասական էֆեկտին: Ընդ որում, երբ առևտրի պայմանների էֆեկտը առավելագույն չափով գերազանցում է առևտրի ծավալի էֆեկտին, կասենք, որ մաքսատուրքի դրույքն օպտիմալ է:

Սակայն, եթե B երկիրը, ի պատասխան A երկրի մաքսատուրքի, նույնպես սահմանում է ներմուծման մաքսատուրք, ապա առևտրի պայմանները դարձյալ փոխվում են՝ այս անգամ ի

վնաս A երկրի: Իսկ առևտրի ծավալը շարունակում է նվազել: Գծ. 12-11-ում B երկրի մաքսատուրքից նրա փոխառաջարկի կորը տեղաշարժվում է B^1 -ից B^2 , և նոր հավասարակշռությունը հաստատվում է e^* -ում:


Գծանկար 12-10:

Ներմուծման մաքսատուրքի հետևանքով փոխառաջարկի կորի տեղաշարժը




Գծանկար 12-11:

Ներմուծման մաքսատուրքի ազդեցությունը մեծ երկրի դեպքում



Գծանկար 12-12:

Ներմուծման մաքսատուրքի ազդեցությունը փոքր երկրի դեպքում



Այսպիսով՝ փոխադարձ մաքսատուրքերի (առևտրային պատերազմի) պատճառով առևտրի ծավալը և ընդհանուր բարեկեցությունը նվազում են:

Նկատենք, եթե A երկիրը լիներ փոքր, ապա B -ի փոխառաջարկի կորը կլիներ ուղիղ գիծ (գծ. 12-12)՝ արտահայտելով այն հանգամանքը, որ A -ի մաքսատուրքը միջազգային

հարաբերական գնի վրա չի ազդում: Այդ դեպքում մաքսատուրքը կկրճատի միայն առևտրի ծավալը՝ առանց առևտրի պայմանները բարելավելու: Այսինքն՝ բարեկեցության վրա մաքսի ազդեցությունը կլինի միարժեքորեն բացասական:

Փաստացի պաշտպանության դրույք

Տեղական արտադրողին արտաքին մրցակցությունից պաշտպանելու համար երկրները, սովորաբար, վերջնական արտադրանքի ներմուծման նկատմամբ սահմանում են ավելի բարձր մաքսատուրք, քան միջանկյալ ապրանքների և հումքի ներմուծման նկատմամբ:

Համարենք՝ h ներմուծվող, h տեղական արտադրության համակարգիչների գինը ներքին շուկայում \$600 է: Դիցուք՝ տեղական արտադրողները որոշ մասեր, որոնց ընդհանուր արժեքը \$400 է, ներմուծում են: Տեղական արտադրողների ստեղծած ավելացված արժեքը \$200 (= \$600 – \$400) է:

Եթե պատրաստի համակարգիչի (վերջնական արտադրանքի) ներմուծման համար սահմանվի 10% մաքսատուրք, ապա տեղական շուկայում գինը կզառնա \$660: Շեշտենք՝ կբարձրանա h ներմուծվող, h տեղում արտադրվող համակարգիչների գինը, քանի որ համարում ենք, որ շուկան կատարյալ մրցակցային է:

Գծ. 12-1-ի վերլուծությունից գիտենք, որ մաքսատուրքի հետևանքով տեղական արտադրությունը կընդլայնվի, իսկ ներմուծումը կկրճատվի:

Մաքսատուրքից հետո տեղական արտադրողների ստեղծած ավելացված արժեքը կկազմի \$260 (= \$660 – \$400), որը 30%-ով բարձր է նախկին \$200-ի համեմատ:

Ավելացված արժեքի հավելանքը կանվանենք «փաստացի պաշտպանության դրույք» (ՓՊԴ)

$$(12-1) \quad \text{ՓՊԴ} = \frac{V_1 - V_0}{V_0}$$

որտեղ V_0 ավելացված արժեքն է մաքսատուրքից առաջ, V_1 ՝ մաքսատուրքից հետո: Մեր օրինակում փաստացի պաշտպանության դրույքը 30% (= (\$260 – \$200)/\$200) է:

Նկատենք՝ վերջնական արտադրանքի վրա 10% մաքսատուրքի արդյունքում ապահովվեց ներքին արտադրողի 30% փաստացի պաշտպանություն:

Եթե միջանկյալ ապրանքների ներմուծման համար նույնպես սահմանվի մաքսատուրք, ապա փաստացի պաշտպանության դրույք կնվազի: Օրինակ, եթե ներմուծվող մասերի վրա, որոնց արժեքը \$400 է, սահմանվի 5% մաքսատուրք, ապա տեղական արտադրողների ստեղծած ավելացված արժեքը կկազմի \$240 (= \$660 – \$420), իսկ փաստացի պաշտպանության դրույքը՝ 20% = (\$240 – \$200)/\$200:

Նշանակենք t_f -ով վերջնական արտադրանքի ներմուծման մաքսատուրքը, t_i -ով՝ միջանկյալ ապրանքների ներմուծման մաքսատուրքը, P -ով՝ վերջնական արտադրանքի գինը նախքան մաքսատուրքը, a -ով՝ վերջնական արտադրանքի արժեքում ներմուծվող միջանկյալ ապրանքների կշիռը նախքան մաքսատուրքը:

$$(12-2) \quad \text{ՓՊԴ} = \frac{V_1 - V_0}{V_0} = \frac{\{P(1 + t_f) - Pa(1 + t_i)\} - \{P(1 - a)\}}{P(1 - a)} = \frac{t_f - at_i}{1 - a}$$

Հվ. 12-2-ից հետևում է, երբ $t_f > t_i$, ապա $\Phi \Omega > t_f$ ։ Այսինքն՝ ներքին արտադրողի փաստացի պաշտպանությունը վերջնական արտադրանքի ներմուծման մաքսատուրքից բարձր է, եթե վերջինը բարձր է միջանկյալ ապրանքների ներմուծման մաքսատուրքից։ Այդ պատճառով է, որ երկրները, սովորաբար, վերջնական արտադրանքի համար ավելի բարձր ներմուծման մաքսատուրք են սահմանում, քան միջանկյալ ապրանքների համար։

Հղումներ

- Bown, C. P., & Irwin, D. A. (2015). The GATT's starting point: tariff levels circa 1947: National Bureau of Economic Research.
- Heritage Foundation. (2017). Index of Economic Freedom.